ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2018- 30.01/57

30.01.2018 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ

2016 թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2017 թվականի միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառված որոշ միջոցառումների կատարող են հանդիսանում ՀՀ մարզպետարանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ծրագրի կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝

5.14.1 Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացումը ՀՀ կառավարության աշխատակազմ

- Արդյո՞ք ուսումնասիրվել է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքներ իրականացնող ծառայությունների կարիքները *(խնդրում եմ տրամադրել ուսումնասիրության արդյունքները)*
- Արդյո՞ք ներկայացվել են առաջարկություններ ուսումնասիրության արդյունքների հիման վրա, եթե այո՝ ինչ առաջարկություններ են ներկայացվել և ինչ արդյունքներ են գրանցվել *(խնդրում եմ տրամադրել առաջարկությունների փաթեթը)*
- Որքա՞ն է կազմել միջոցառման իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների չափը պետական բյուջեից և որքա՞ն ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներից

5.14.2 Թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի մոտ հաշվառված անձանց, որոնք գտնվում են դադարի /ռեմիսիայի/ շրջանում կամ հաջողությամբ ավարտել են բուժման կուրսը, զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկելը

- Արդյո՞ք համապատասխան անձինք 2017 թ. ընդգրկվել են զբաղվածության կարգավորման ծրագրերում, եթե այո՝ քանի անձ է ընդգրկվել և ինչ ծրագրերում և ինչ արդյունքներ են գրանցվել

733
08 02 2018

5.15.Սոցիալական ծառայությունների շրջանակում՝ թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալական կարիքների ամբողջական գնահատում և դրանց համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում

- Արդյո՞ք 2017 թ. ընթացքում գնահատվել է թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց սոցիալական կարիքները, ու՞մ կողմից *(խնդրում եմ տրամադրել գնահատման արդյունքները)*
- Գնահատման արդյունքում արդյո՞ք տրամադրվել է համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթ, եթե այո՝ սոցիալական ինչ ծառայություններ են տրամադրվել, քանի անձի
- Որքա՞ն է կազմել միջոցառման իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների չափը պետական բյուջեից և որքա՞ն ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներից:

5.16. Բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների միջև սերտ համագործակցության ապահովում

- Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների միջև համագործակցության ապահովման նպատակով և ինչ արդյունքներ են գրանցվել
(խնդրում եմ առկայության դեպքում տրամադրել կնքված հուշագրի կամ համագործակցության վերաբերյալ այլ փաստաթղթերի օրինակները):

6.17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպել թմրամոլության կանխարգելման վերաբերյալ բաց դասեր, քննարկումներ և իրազեկման դասընթացներ

- Արդյո՞ք կազմակերպվել են թմրամիջոցների գործածման կանխարգելման վերաբերյալ բաց դասեր, քննարկումներ և իրազեկման դասընթացներ նշված հաստատություններում
- Քանի՞ բաց դաս, քննարկում և իրազեկման դասընթաց է կազմակերպվել, ու՞մ կողմից, ո՞ր հաստատություններում, քանի՞ մասնակից է եղել *(խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ գործողության տեսակի և հաստատությունների)*

6.18.1 Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում

- 2017 թ. ընթացքում արդյո՞ք կազմակերպվել և անց են կացվել ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումներ, եթե այո՝ քանի անգամ, որտեղ, ինչ միջոցառումներ, ում կողմից են անցկացվել և որքան է եղել մասնակիցների թիվը
- Որքա՞ն է կազմել միջոցառման իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների չափը պետական բյուջեից և որքա՞ն ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներից

6.18.2 Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչություն՝ տպագիր, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով

- Արդյո՞ք իրականացվել է ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչություն, եթե այո՝ զանգվածային լրատվության որ միջոցներով, քանի հաղորդման, հրապարակման միջոցով կամ քարոզչության այլ ձևով *(խնդրում եմ տրամադրել համապատասխան հաղորդաշարերի, հրապարակումների հղումները/օրինակները)*
- Որքա՞ն է կազմել միջոցառման իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների չափը պետական բյուջեից և որքա՞ն ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներից:

6.19. Ըստ բնակության վայրերի պարզ տիպի խաղահրապարակների ստեղծում

- 2017 թ. ընթացքում արդյո՞ք ստեղծվել են պարզ տիպի խաղահրապարակներ, եթե այո՝ քանի խաղահրապարակ է ստեղծվել, որտեղ
- Ներկայում քանի՞ խաղահրապարակ է առկա ՀՀ համայնքներում և արդյո՞ք կատարվել է համապատասխան գնահատում՝ պարզելու, թե ընդհանուր առմամբ պարզ տիպի քանի խաղահրապարակ է անհրաժեշտ ՀՀ համայնքներում
- Որքա՞ն է կազմել միջոցառման իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների չափը պետական բյուջեից և որքա՞ն ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներից:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել նաև տեղեկատվություն՝

- 2017 թ. ընթացքում ընդհանուր որքա՞ն ֆինանսական միջոցներ է հատկացվել Վայոց ձորի մարզպետարանին ծրագրի միջոցառումների կատարման համար, դրանից որքանը՝ պետական բյուջեից, որքանը՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներից,
- արդյո՞ք Վայոց ձորի մարզպետարանի կողմից գնահատվել է «Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագրի» և «Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2017 թվականի միջոցառումների ծրագրի» շրջանակներում մարզպետարանին վերապահված միջոցառումների իրականացումը *(առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել գնահատման արդյունքները)*,
- արդյո՞ք իրականացվել են այլ գործողություններ՝ ուղղված ծրագրի իրականացմանը, եթե այո՝ որ միջոցառումների իրականացմանն են ուղղված եղել և ինչ գործողություններ են իրականացվել:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ Արթուր Սաքունց

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268